ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

1.1. Ներկայումս ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի» (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) կարգավորումների համաձայն՝ Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2-ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում: Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, որը ներկայացվել էր Դատական օրենսգրքի փոփոխությունների նախնական տարբերակի վերաբերյալ և որի համաձայն հանձնաժողովի կազմում նախատեսված էր երեք ոչ դատավոր անդամների ներգրավում, ինչը Վենետիկի հանձնաժողովը ողջունելի էր համարել՝ հանձնաժողովի գործունեությունը արտաքին վերահսկողության/դիտարկման համար առավել բաց դարձնելու տեսանկյունից[1]: Իր հերթին, 2017 թ.-ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում[2] Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների ընդգրկման միջոցով:

---

[1] Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ թիվ CDL-AD(2019)024 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e հղումով:

[2] Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2017)019 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e հղումով:

Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքում[3] ողջունել է իշխանությունների կողմից բարեփոխումների հետևողական իրականացման և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ կատարվող ջանքերը (para. 17): Մասնավորապես նշվում է, որ առաջարկվող տարբերակով ոչ դատավոր անդամների թիվը ավելացնելը և երկուսից հինգ դարձնելը ողջունելի է և համընկնում է նախորդ գնահատականի հետ, որով դրական էր գնահատվել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ներկայությունը՝ դատական կորպորատիվիզմի ռիսկերը սահմանափակելու նպատակով (para. 19):

Կարծիքում էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում արտաքին (ոչ դատավոր անդամների) մասնակցության ընդլայնումը դիտարկվում է դրական փոփոխություն, քանի որ այն ուղղված է «կորպորատիվիզմի» ռիսկի նվազեցմանը՝ միաժամանակ շեշտելով, որ այս միջոցը չպետք է կրի դատական համակարգի վրա այլ պետական ճյուղերի կողմից անհիմն ազդեցության ռիսկերը: Այլ կերպ ասած, սոցիալական ներառականության և բազմակարծության նպատակը չպետք է իրականացվի դատական անկախության գնով: Հետևաբար, հանձնաժողովի դատական անդամներին որպես օգտակար հակակշիռ պետք է հանդես գան քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները լայն իմաստով (ներառյալ, իրավունքի դասախոսների և այլ իրավասու ակադեմիական մասնագետների) (para. 20):

Անհրաժեշտ է ընդգծել նաև այն, որ համանման մոտեցման հիման վրա է գործում նաև Մոլդովայի Հանրապետության «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքը[4], որի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

---

[3] Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ թիվ CDL-AD(2023)045 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2023)045-e հղումով:

[4] Տե՛ս, Մոլդովայի Հանրապետության «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքի հղումը՝ https://www.legis.md/cautare/getResults?doc_id=135676&lang=ru#

Դատավորների կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 4 դատավորից և քաղաքացիական հասարակության 3 ներկայացուցչից: Նշված հարաբերակցության (սկզբնական շրջանում նախատեսված է եղել 5 դատավոր և 4 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ հարաբերակցությունը) վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաև Վենետիկի հանձնաժողովը, նշելով, որ նման կազմը ողջունելի է, քանի որ այն կօգնի ապահովել դրա գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև համայնքի ներգրավվածությունը կարգապահական վարույթներում՝ միաժամանակ կանխելով դատական կորպորատիվիզմի ռիսկը:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը:

1.2. Ներկայումս Օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովներում որպես դատավոր չհանդիսացող անդամ կարող են ընտրվել նաև գործող փաստաբանները, կամ անձինք, ովքեր իրավասու են դատարաններում իրականացնել ներկայացուցչություն:

Նշվածը խնդրահարույց է այնքանով, որ Դատավորների ընդհանուր ժողովը՝ իր հանձնաժողովներով հանդերձ, դատավորների ինքնակառավարման մարմին է, որի գործողությունները իրավական, այդ թվում՝ բացասական հետևանքներ են ունենում դատավորների համար: Այս առումով, գործող փաստաբանների կամ դատարաններում այլ կերպ ներկայացուցչություն իրականացնողների ընդգրկումը Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում օբյեկտիվորեն կարող է ենթադրել շահերի բախման և սուբյեկտիվիզմի դրսևորման այլ հնարավոր ռիսկեր, քանի որ վերջիններիս գործունեությունն անմիջականորեն կապված է դատարանների հետ: Այսպես, գործնականում հաճախ են լինելու իրավիճակներ, երբ դատարանի կայացրած դատական ակտը «չի բավարարելու» որևէ կողմի (ներկայացուցչի) ակնկալիքները, ինչով պայմանավորված վերջինս սուբյեկտիվ տրամադրվածություն է ունենալու դատավորի նկատմամբ: Ըստ այդմ, օրինակ՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի

հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը, որը զուգահեռ իրականացնում է նաև փաստաբանական գործունեություն կամ այլ կերպ ներկայացուցչություն է իրականացնում դատարաններում, կարող է շահագրգռվածություն ունենալ կոնկրետ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում:

Վերոգրյալի համատեքստում նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանափակել անձի՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում որպես անդամ ընդգրկվելու դեպքում լիազորությունների ժամկետով դատարաններում ներկայացուցչություն իրականացնելու իրավունքը:

1.3. Ներկայումս Դատական օրենսգրքում առկա կարգավորումների համաձայն Դատավորների ընդհանուր ժողովի ոչ դատավոր անդամների թեկնածուները կարող են ներկայացնել միայն Բարձրագույն դատական խորհրդի սահմանած պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները, իսկ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման քննությանը կարող են ներկա գտնվել իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների: Նման սահմանափակումը պայմանավորված է նրանով, որ հասարակական կազմակերպությունները իրենց կարգավիճակով ոչ առևտրային կազմակերպություններ են և նրանց գործունեության ուղղությունը սահմանվում է իրենց կանոնադրությամբ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հիմնադրամը նույնպես համարվում է ոչ առևտրային կազմակերպություն, որը կարող է գործունեություն իրականացնել միայն հանրօգուտ նպատակների շրջանակներում, սակայն Օրենսգրքի կարգավորումների համաձայն նույնիսկ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հիմնադրամները միայն իրենց կազմակերպաիրավական ձևից ելնելով հնարավորություն չունեն թեկնածուներ առաջադրելու:

Ներկայացվածի շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում Օրենսգրքով հասարակական կազմակերպություններին վերապահված բնագավառներում թեկնածու առաջադրելու իրավասություն վերապահել նաև այլ ոչ առևտրային կազմակերպությունների: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ներկայացված Նախագծի համաձայն Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների թիվը ավելանալու է ևս մեկով, որտեղ կարող են ընդգրկվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվող թեկնածուներ, ինչպես նաև լրացվում է Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամների թիվը, որի համար թեկնածուներ կարող են ներկայացնել միայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող հասարակական կազմակերպությունները, հետևաբար որոշակի պահանջների բավարարող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից թեկնածուների առաջադրումը կարող է նպաստել Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում նոր թեկնածուների ընդգրկմանը:

Միևնույն ժամանակ խնդրին անդրադարձել են նաև Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինությունը՝ նշելով[5], որ իշխանությունները պետք է քննարկեն և մշակեն ոչ դատավոր անդամների առաջադրման ամենահարմար մոդելը՝ հաշվի առնելով Հայաստանի քաղաքական և ինստիտուցիոնալ իրողությունները: Այս համատեքստում իշխանությունները կարող են լրացուցիչ ուշադրություն դարձնել մասնագիտական հանրության դերին առաջադրման գործընթացում՝ ապահովելով, որ իրավունքի դասախոսները և այլ իրավասու ակադեմիական մասնագետները բավարար հասանելիություն ունենան այդ պաշտոններին: Ամեն դեպքում, մոդելը մշակելիս Հայաստանի իշխանությունները պետք է իրական փորձ կատարեն ապահովելու, որ առաջադրման ընթացակարգը

[5] CDL-AD(2023)045, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2023)045-e

չքաղաքականացվի, և որ առաջադրող մարմինները չդիտարկվեն որպես դատական համակարգի վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու գործիքներ (para. 23):

Կարծիքում առաջարկվում է իրավական որոշակիության և օրենքի կանխատեսելիության նպատակով հանձնաժողովի ոչ դատավոր անդամների թեկնածուների առաջադրմանը մասնակցելու պահանջները որոշվեին օրենքով, ԲԴԽ-ին կարող է լիազորություն տրվել որոշելու, թե արդյոք կազմակերպությունը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին (para. 24): Միաժամանակը ողջունելի են համարվել թեկնածուների մրցութային կարգով ընտրության վերաբերյալ մոտեցումները (para. 25):

1.4. Դատական օրենսգրքի ներկայումս գործող կարգավորումների համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

2) Արդարադատության նախարարությունը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (որոշ սահմանափակ դեպքերում):

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է ութ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից երկուսն ընտրվում են մասնագիտացված դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից:

Որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող է առաջադրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, որևէ կուսակցության անդամ չէ, և նրա նկատմամբ

առկա չեն Օրենսգրքով նախատեսված սահմանափակումները: Որպես թեկնածու կարող են առաջադրել Բարձրագույն դատական խորհրդի սահմանած պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով:

Ինչպես GRECO-ն, այնպես էլ Վենետիկի հանձնաժողովը իրենց տարբեր փաստաթղթերում[6] մատնանշել են դատավորների նկատմամբ կարգապահական ընթացակարգերի վերանայման անհրաժեշտությունը: Վենետիկի հանձնաժողովը, մասնավորապես, նշել է, որ Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի բարեփոխումների լույսի ներքո պետք է որ հնարավոր լինի նախարարի կողմից վարույթ հարուցելու գործառույթը աստիճանաբար վերացնել, երբ նոր համակարգը գործի դրվի և աշխատի[7]: Հանձնաժողովը նաև նշել է, որ թեև նախարարի ներգրավվածությունը ներկայումս դիտվում է որպես դատական կորպորատիվիզմի դեմ պայքարին օժանդակող գործիք, ավելի երկար հեռանկարում նախընտրելի կլինի հրաժարվել այդ լիազորությունից, երբ մյուս մեխանիզմները, մասնավորապես՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը ապացուցեն իրենց արդյունավետությունը[8]: Ավելին Լիբանանի վերաբերյալ իր վերջին կարծիքում Վենետիկի հանձնաժողովը շեշտել է, որ խնդրահարույց են այն դեպքերը, երբ միայն նախարարը կարող է կարգապահական վարույթ հարուցել, դա կարող է խնդրահարույց լինել և պետք է ձգտել հավասարակշռված համակարգի, որտեղ դատավորների դեմ կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությունը չի

[6] GRECO, Interim Compliance Report Armenia, Fourth Evaluation Round, adopted on 20-22 September 2021, paras. 41 and 43; Venice Commission, CDL-AD(2017)019, Armenia - Opinion on the draft Judicial Code, and CDLAD(2019)024; Venice Commission, CDL-AD(2019)024, Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI), on the amendments to the Judicial Code and some other Laws

[7] Venice Commission, CDL-AD(2022)044, Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI), on the amendments to the Judicial Code, para 8

[8] Venice Commission, CDL-AD(2022)044, Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI), on the amendments to the Judicial Code, para 9

պատկանում ոչ բացառապես նախարարությանը և ոչ էլ բացառապես դատավորներին[9]:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, հավատարիմ լինելով իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը և նպատակ ունենալով կատարելագործել դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի իրավական կարգավորումները, խիստ կարևորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հզորացման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ որպես կարգապահական վարույթ հարուցելու այլընտրանքային ինստիտուտ: Սրան հնարավոր կլինի, սակայն, հասնել այն դեպքում, երբ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությունը միտված չլինի «կորպորատիվ շահերի» սպասարկմանը:

Այս առնչությամբ, հարկ է նշել, որ շատ հարցեր ներկայումս կարող են չընդունվել ներքին կորպորատիվիզմի և ոչ դատավոր անդամների ձայների սակավաթվությամբ պայմանավորված: Սակայն Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների թվաքանակի ավելացումը չի կարող որակական փոփոխություններ մտցնել այս համակարգում, հետևաբար՝ բավարար չէ լիարժեք արդյունքին հասնելու և կարգապահական վարույթների հարուցման հարցում հավասարակշռված համակարգ ու ռեալ այլընտրանք ունենալու հարցում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ոչ դատավոր անդամների ընտրությունը բացառապես դատավորների տիրույթում է՝ ի դեմս դատավորների ընդհանուր ժողովի:

Մասնավորապես, որ յուրաքանչյուր դեպքում Դատավորների ընդհանուր ժողովը կարող է չընտրել այնպիսի թեկնածուի, ով կարող է հետագայում արժեքավոր մասնակցություն ունենալ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման արդյունավետության բարձրացմանը, կամ ովքեր սկզբունքային, օբյեկտիվ և «շահեր չսպասարկելու» իրենց մոտեցումներ են նախկինում արտահայտել, այդ թվում՝ դատավորների շրջանում վեթթինգ անելու

[9] Venice Commission, CDL-AD(2022)020, Lebanon - Opinion on the draft law on the independence of judicial courts, para. 71

անհրաժեշտության մասին: Սրանով փաստորեն հնարավոր չի լինում լիարժեք կանխել այն «կորպորատիվիզմը», որի վերացման համար հենց նախատեսվել է ոչ դատավոր անդամների թվի ավելացումը հանձնաժողովում:

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ համատեղ կարծիքում[10] Վենետիկի հանձնաժողովը ողջունել է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխությունները՝ նշելով, որ հայեցակարգով ներկայացված փոփոխությունները համահունչ են Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության կողմից նախկինում տրված առաջարկությանը՝ բարձրացնելու նշված հանձնաժողովի արդյունավետությունը, դրանով իսկ հնարավոր դարձնելով արդարադատության նախարարին հեռացնել դատավորների նկատմամբ կարգապահական գործեր հարուցելու իրավասու սուբյեկտների շարքից: Նույն կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում արտաքին մասնակցության ընդլայնումը դրական փոփոխություն է, քանի որ այն ուղղված է «կորպորատիվիզմի» ռիսկի նվազեցմանը: Ավելին, Վենետիկի հանձնաժողովը կարևորել է նաև հանձնաժողովի քվորումի և որոշումների ընդունման հարցերը՝ արձանագրելով, որ թե դատավոր անդամների, թե ոչ դատավոր անդամների արդյունավետ մասնակցության համար, կարող է տեղին լինել ապահովել, որ հանձնաժողովում որոշումները չընդունվեն բացառապես այդ խմբերից մեկի քվեարկությամբ:

Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինությունը վերը նշված համատեղ կարծիքում ողջունել են նաև իշխանությունների ջանքերը՝ մշակելու հանձնաժողովի

[10] CDL-AD(2023)045-e Armenia - Joint opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the Concept Paper concerning the reform of the Ethics and Disciplinary Commission of the General Assembly of Judges, adopted by the Venice Commission at its 137th Plenary Session (Venice, 15-16 December 2023), https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2023)045-e

ոչ դատավոր անդամների ընտրության համար հավասարակշռման մեխանիզմ, իսկ ԲԴԽ կողմից ընտրությունը դիտարկվել է ողջամիտ առաջարկ: Այնուամենայնիվ, նշվել է, որ ընդհանուր ժողովի՝ թեկնածու չընտրելու պատճառաբանված որոշումը, հատկապես եթե որոշումն ընդունված է որակյալ մեծամասնությամբ, պետք է զգալի կշիռ ունենա ԲԴԽ-ի առջև հետագա ընթացակարգերում (para. 35):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թվի ավելացմանը զուգահեռ վերանայել Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությանն ու գործառույթներին վերաբերող կարգավորումները:

1.5. Ներկայումս Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուներին բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ներկայացնելու պահանջ չի ներկայացվում: Սակայն, հաշվի առնելով այն, որ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունն է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, այն կասեցնելը, վերսկսելը, կարճելը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը, ինչպես նաև հիմք ընդունելով այն, որ նախատեսվում է դատավոր չհանդիսացող անդամների թիվը ավելացնել 3-ով, և նրանց ներկայացվածությունը հանձնաժողովում ծանրակշիռ դեր է ունենալու՝ առաջացել է նաև նրանց համար բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ներկայացնելու պահանջ սահմանելու անհրաժեշտություն: Նշված հարցաթերթիկի կապակցությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետք է տրամադրի խորհրդատվական եզրակացությունը, որը կարող է հաշվի առնվել Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ժամանակ:

Վերը կատարված վերլուծության շրջանակներում պայմանավորված նաև անհրաժեշտություն է առաջացել նախատեսել թեկնածուների կողմից Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր չհանդիսացող

անդամ ընտրվելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պահանջված դեպքերում իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն:

1.6. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-6-րդ կետերով նախատեսված են Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնելիս հերթերը, ըստ որի՝

- հինգերորդ հերթին ներկայացվում են թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին,

- վեցերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին,

- յոթերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին:

Այս կարգավորումներից հետևում է, որ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդներին դատավոր նշանակելու համար առաջարկությունը ներկայացվում է ավելի ուշ հերթով, քան թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած

թեկնածուներին: Մինչդեռ, հարկ է նկատի ունենալ, որ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդները և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդները ևս ուսուցում են անցնում Արդարադատության ակադեմիայում, հանձնում են նույն քննությունները, ինչ 5-րդ հերթով նախատեսված թեկնածուները: Նման պայմաններում վերը նշված երկու հերթերում ընդգրկված թեկնածուների դեպքում առանց արդարացի հիմքի դատավոր նշանակելու համար առաջարկությունը ներկայացվում է միայն հինգերորդ հերթի բոլոր թեկնածուներին սպառելուց հետո:

1.7. Օրենսգրքում կարիք ունեն հստակեցման նաև ԴԸԺ հանձնաժողովի դատավոր անդամի, այնպես էլ դատավոր չհանդիսացող անդամի կողմից վարքագծի կանոնները խախտելու, ինչպես նաև Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի կողմից Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու կամ իր գործունեության ընթացքում և դրանից հետո երկու տարվա ընթացքում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր ներկայացնել պահանջները խախտելու հետևանքները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների

նախագծերի (այսուհետ նաև՝ Նախագծեր) ընդունման արդյունքում նախատեսվելու են հետևյալ հիմնական փոփոխությունները.

1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացնել 3 ձայնով, հստակեցվում են հանձնաժողովի գործունեությանն ու գործառույթներին վերաբերող կարգավորումները:

2. Սահմանափակել Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի կողմից Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացումը:

3. Օրենքով սահմանված կարգով գրանցված և որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող ոչ առևտրային կազմակերպությունները հնարավորություն կունենան առաջադրելու Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի ոչ դատավոր անդամի թեկնածուներ:

4. Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդները կներառվեն ավելի վաղ հերթում:

5. Սահմանվում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների կողմից իրենց ընտրությունից առաջ Դատական դեպարտամենտ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ներկայացնելու, ինչպես նաև ընտրվելու դեպքում՝ ըստ պահանջի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու պահանջներ:

6. Սահմանվում է ինչպես ԴԸԺ հանձնաժողովի դատավոր անդամի, այնպես էլ դատավոր չհանդիսացող անդամի կողմից վարքագծի կանոնները խախտելու, ինչպես նաև Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի կողմից Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ

ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու կամ իր գործունեության ընթացքում և դրանից հետո երկու տարվա ընթացքում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր ներկայացնել պահանջները խախտելու դեպքում Հանձնաժողովի անդամի լիազորությունները ենթակա են լինում դադարեցման:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի նպատակը էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշռի և հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացումն է:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 4-րդ նպատակի 9-րդ գործողությունից, որը նախատեսում է վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը: